# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



*Նոյեմբերի 11-ին տեղի է ունեցել ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան Վոլոդյա Միրզոյանը հանդես է եկել 2021-2022 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքի մասին հաշվետվությամբ: Նիստին ներկա էին նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետի խորհրդի անդամներ:*

Բնագիտական ֆակուլտետն իր գործունեությունը ծավալել է չորս՝ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, մաթեմատիկայի և ֆիզիկայի, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնների միջոցով: Համաձայն հաշվետվության՝ 2021-2022 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է բակալավրիատի առկա և հեռակա, ինչպես նաև մագիստրատուրայի առկա և հեռակա ուսումնական ծրագրերով:

«Բնագիտական ֆակուլտետի առաքելությունն է մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինը կարևորող, արհեստավարժ, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մասնագետների պատրաստումն է: Բնագիտական ֆակուլտետի տեսլականն է բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձրորակ մշակույթի ձևավորումը, մատուցող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշների: Բնագիտական ֆակուլտետի շրջանավարտը պետք է լինի համակողմանի զարգացած, պետական մտածելակերպով օժտված քաղաքացի և հարգի պետական խորհրդանիշները»,-նշել է Վոլոդյա Միրզոյանը և հանգամանալից ներկայացրել այդ նպատակներին ու տեսլականին միտված գիտակրթական, մշակութային միջոցառումներ, որոնք կազմակերպել է ֆակուլտետը հաշվետու տարում:

«Մեզ բոլորիս հայտնի է, որ վերջին տարիներին բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրությունը նվազել է, ինչը փաստում է այս և նախորդ տարիների դիմորդների կտրուկ անկումը: Ես կարծում եմ, որ նախ կարևոր է հանրակրթական դպրոցի դերը, հիմնական օղակում բնագիտական առարկաներին հատկացված դասաժամերի քանակը քիչ է, մատուցվելիք գիտելիքներ՝ շատ: Պակաս կարևոր չէ նաև աշխատանքի տեղավորման հարցը, մանկավարժ աշխատելը եկամտաբեր չէ, գիտահետազոտական ինստիտուտներ, արդյունաբերություն չունենք, տնտեսության և գիտության կողմից պատվերներ չկան»,-նշել է դեկանը՝ կարևորելով բուհ-դպրոց կապը և համագործակցության արդյունավետ ձևաչափ գտնելը: Նրա խոսքով՝ խնդրի լուծմանը նպաստելու նպատակով հաշվետու տարում համալսարանի ղեկավարության նախաձեռնությամբ այցելություններ են կազմակերպել հանրապետության շրջանների մի շարք դպրոցներ:

Հաշվետվության շուրջ հնչել են ելույթներ՝ բարձր գնահատելով ֆակուլտետի կատարած գործունեությունը: Հաշվետվությունը գնահատվել է բավարար:



«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
*Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Ջ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 08(245)
*Նոյեմբեր - 2022*

## ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ



*Սիրելի՛ ուսանողներ,*

*Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ուսանողների միջազգային օրվա առթիվ:*

*Ուսանողական տարիները կյանքի ամենաhիշարժան ու հետաքրքիր ժամանակահատվածն են: Ցավոք, 2020 թ. աղետալի պատերազմում մեր անմահացած ուսանողները, որ այսօր պիտի Ձեզ հետ տոնեին այս օրը, հավերժի ճամփորդներ են, ովքեր իրենց կյանքի գնով պաշտպանեցին հայրենիքը և անմահացան հանուն նաև այս օրվան:*

*Հավերժ փառք և պատիվ նրանց, խոնարհումս նրանց հարազատներին:*

*Սիրելի՛ ուսանողներ,*

*Արցախի պետական համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն գործելաոճ և ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները՝ ինչպես կրթության որակի շարունակական բարելավման, այնպես էլ ուսանողական կյանքը տարաբնույթ միջոցառումներով ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու նպատակով:*

*Ձեզ հետ միասին կազմակերպած գիտաժողովները, ամառային ճամբարները, պատմաճանաչողական արշավները և հետաքրքիր այլ միջոցառումները ոչ միայն մեր համալսարանի, այլ նաև մեր հայրենիքի ամենալուսավոր ու վառ գույներով բնորոշվող իրադարձություններն են, ապրող Արցախի ու անկոտրում արցախցու մասին պատմող փաստարկներ:*

*Մենք ձեզ հետ միասին հաղթահարել և ամեն օր շարունակում ենք հաղթահարել դժվարություններ՝ ձգտելով ամեն մի օրը ավելի լավը դարձնել նախորդից, յուրաքանչյուր ժամը ծառայեցնելով նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեզ փոխանցելուն, քանզի գիտելիքով զինված մարդն անպարտելի է:*

*Մաղթում եմ Ձեզ նպատակասլացություն, լավատեսություն, անսպառ եռանդ Ձեր ընտրած մասնագիտության բնագավառում լավագույնը դառնալու ճանապարհին: Ապրեք և արարեք խաղաղ ու անվտանգ հայրենիքում և հաջողություններ արձանագրեք արժանապատիվ խաղաղության պայմաններում:*

# ԱրՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

***Նոյեմբերի 17-ին Արցախի պետական համալսարանում Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում:***



Համալսարանականները նախ ծաղիկներ են խոնարհել զոհված ուսանողների հիշատակը հավերժացնող հուշակոթողին՝ հարգանքի տուրք մատուցելով Արցախյան բոլոր պատերազմներում հերոսացած տղաների հիշատակին:

Օրվա առթիվ ուսանողներին շնորհավորական խոսք է հղել բուհի ռեկտոր Արմեն Սարգսյանը:

«Ինչքան ուրախալի կլիներ, եթե այսօր մեզ հետ լինեին նաև բուհի 26 հերոս ուսանողները: Բայց ցավոք ազատությունը տրվում է հաճախ մեծ զոհերի գնով: Փառք ու պատիվ մեր նահատակ հերոսներին, նրանց շնորհիվ է, որ այսօր գոյատևում է Արցախը:

Մենք թևակոխել ենք մի դարաշրջան, երբ առանց երիտասարդների անմիջական մասնակցության և առանց նրանց խորհուրդների ու դիտողությունների հնարավոր չէ որևէ արդյունքի հասնել»,-ասել է բուհի ռեկտորը՝ կարևորելով երիտասարդության դերը երկրի զարգացման բոլոր բնագավառներում:

ԱրՊՀ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, շնորհավորելով ուսանողությանը տոնի առթիվ, համոզմունք է հայտնել, որ երիտասարդության ունեցած ջանքն ու նվիրումը կնպաստի Արցախի զարգացմանը. «Մեր երկրի ներկան, ապագան, հույսն ու հավատը, մեր երկրի ձեռքբերումը մեր ուսանողներն են»:

Ուսանողներին շնորհավորել և բարեմաղթանքներ են հղել նաև պրոռեկտորները, ֆակուլտետների դեկանները, ուսանողական խորհրդի նախագահը: Բարձր առաջադիմություն, պատշաճ վարքագիծ, հասարակական ակտիվություն ցուցաբերած, ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված մրցույթներում հաղթող ճանաչված 120 ուսանող տարբեր անվանակարգերում խրախուսվել է ԱրՊՀ ղեկավարության կողմից:

# ԱրՊՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ



***«Տարվա լավագույն ուսանող» մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ ներբուհական և հանրապետական՝ հիմք ընդունելով թեկնածուների ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը:***

Մրցույթին այս տարի հայտ էին ներկայացրել ֆակուլտետների լավագույն ուսանողները՝

«Հոգեբանություն» կ/ծ 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Իլգարի Առստամյանը, «Անգլերեն լեզու և գրկանություն» կ/ծ 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիաննա Իգորի Աղաբեկյանը, «Մաթեմատիկա» կ/ծ 4-րդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Անատոլիի Սահակյանը, «Իրավագիտություն» կ/ծ 3-րդ կուրսի ուսանող Արա Կարոյի Սարգսյանը և «Ֆինանսներ» կ/ծ 4-րդ կուրսի ուսանող Քրիստինե Կարենի Կարապետյանը:

Մրցույթի արդյունքներով տարվա լավագույն ուսանող է ճանաչվել Արա Սարգսյանը: Նա կմասնակցի «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի հանրապետական փուլին, որտեղ մրցույթը կկայանա տարբեր բուհերի լավագույն ճանաչված ուսանողների միջև:



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

***Նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկանի պաշտոնակատար Շահեն Այդինյանը ներկայացրել է 2021-2022 ուստարվա ընթացքում ֆակուլտետի կատարած աշխատանքի մասին հաշվետվություն: Նիստին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետի խորհրդի անդամներ:***



Դեկանը ներկայացրել է ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը, հաշվետու տարում կրթական գործունեության կազմակերպումը, իրականացված գիտամեթոդական և ուսանողների հետ աշխատանքը և արտալսարանային գործունեությունը, միջբուհական և այլ համագործակցության ուղղությամբ կյանքի կոչված ծրագրերը:

«2021-22 ուսումնական տարում մանկավարժության և սպորտի ֆակուլտետում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել ու իրականացվել են անվտանգային համեմատաբար կայուն պայմաններում, չնայած տարվա ընթացքում Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերի ուղղությամբ տեղի են ունեցել ռազմական բնույթի միջադեպեր ու ընդհառումներ: Ուսումնական տարին ամբողջությամբ բարվոք չէր նաև համաճարակային հիվանդությունների պարբերաբար սրացումների առումով: Չնայած դրան ֆակուլտետում տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվել են կրթական ծրագրերի պահանջների և ստորաբաժանումների ուստարվա պլանների համապատասխան»,-նշել է Շ. Այդինյանը:

Համաձայն հաշվետվության՝ 2021-22 ուստարում մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսուցման առկա համակարգի բակալավրիական չորս կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ ձևավորվել էր 14 խումբ՝ 171 ուսանող թվակազմով և մագիստրոսական երկու կրթական ծրագրերի ուղղությամբ երեք խումբ՝ 25 ուսանող թվաքանակով:

2021-22 ուստարում ֆակուլտետի ամբիոններում այս ուղղությամբ տարվել է զգալի աշխատանք: Ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության, ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոններում գիտական և գիտամեթոդական աշխատանքների ուղղություններ են հանդիսացել ստեղծագործական մտածողություն և հումանիստական արժեհամակարգ ունեցող մանկավարժների հիմնախնդիրները, հետպատերազմական հոգեբանական բացասական ազդեցությունների ուսումնասիրման ու դրանց հաղթահարման ուղղություններն ու եղանակները, ֆիզդաստիարակության տեսության և մեթոդիկայի, առողջ ապրելակերպի, առողջության ամրապնդման, ռազմական- փործագիտական և վերլուծական գործունեությունը:

Ամբիոնների դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների թեստեր,առարկայական նկարագրեր և մասնակցել տարբեր կոնֆերանսների և գիտաժողովների:

Ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնում հաշվետու ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարվել ռազմավարական և մասնագիտական կրթական ծրագրերի, թեստերի, ինքնուրույն աշխատանքների ստուգման նոր մեթոդաբանության մշակման ուղղությամբ:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնում տարվել են աշխատանքներ մանկավարժության և հոգեբանության արդիական խնդիրների շուրջ: Ապահովվել է բոլոր դասընթացների գծով առարկայական ծրագրերի, դասախոսությունների, ինքնուրույն աշխատանքների թեմաների և դրանց գնահատման մեթոդաբանությունը: Ուսուցման ընթացքում կիրառվել է մանկավարժական նորարարական տեխնոլոգիաների իրականացում: Ամբիոնի նիստերին իրականացվել են մասնագիտական հոդվածների քննարկումներ, գիտական աշխատանքների ղեկավարների հաշվետվություններ:

Հաշվետվությունը գնահատվել է բավարար: Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել կատարված աշխատանքի համար՝ մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ տալով առաջարկություններ ու հանձնարարականներ:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ



***Նոյեմբերի 9-ին տեղի է ունեցել ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան Արմինե Խաչատրյանը ներկայացրել է 2021-2022 ուստարվա ընթացքում ֆակուլտետի կատարած աշխատանքի մասին հաշվետվություն: Նիստին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետի խորհրդի անդամներ:***

Դեկանն ըստ ուղղությունների անդրադարձել է ֆակուլտետի կառուցվածքին և նրա կառավարման համակարգին, կրթական գործունեության կազմակերպմանը, ուսումնամեթոդական գործունեությանը, ուսանողների և դասախոսների գիտական աշխատանքին, համագործակցությանը: Համաձայն հաշվետվության՝ 2021-2022 ուստարում ֆակուլտետն իր գործունեությունը ծավալել է պատմության և քաղաքագիտության, իրավունքի, կերպարվեստի ամբիոնների միջոցով: Դեկանի խոսքով՝ պատմության և քաղաքագիտության ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է հայոց պատմության, ազգագրության, հնագիտության և ընդհանուր պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրության ուղղությամբ: Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, մենագրություններ, կազմել են մասնագիտական ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ: Հաշվետու տարում հրատարակվել է 40 գիտական աշխատություն: Մասնակցություն է հանդես բերվել միջազգային գիտաժողովների: Պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոսները մասնակցել են գիտաժողովների՝ թե Արցախում, թե ՀՀ-ում: Իրավունքի ամբիոնն իր գիտական ուսումնասիրություններն ու ուսումնական դասընթացները ծավալել է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական իրավունքի, դատավարության ուղղություններով: Հաշվետու տարում ամբիոններում իրականացվել են մի շարք ուսումնամեթոդական աշխատանքներ՝ ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում, գիտական աշխատանքների քննարկում, ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում, թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն, ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի, ասպիրանտների և հայցորդների ատեստավորում: Պատմության և քաղաքագիտության ամբիոնը համագործակցել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ պատմության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտի, Գորիսի և Վորոնեժի պետական համալսարանների հետ: ԱրՊՀ իրավունքի ամբիոնը համագործակցություն է հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, Հայ-ռուսական համալսարանի, Կարմիր Խաչի Միջազգային կազմակերպության և իրավապահ մարմինների հետ: Այդ համագործակցության արգասիքը պարբերաբար իրավագիտության բաժնի ուսանողների համար կազմակերպվող կոնֆերանսներն են, կլոր սեղանները, ամբիոններում կատարվող գիտական քննարկումները:

Դեկանի հաշվետվության շուրջ հնչել են ելույթներ, առաջարկություններ: Հաշվետվությունը գնահատվել է բավարար: ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը իրականացված աշխատանքի համար, իսկ հնչած առաջարկությունների վերաբերյալ նշել, որ բուհի կողմից կձեռնարկվեն քայլեր՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով:



# ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ



***Նոյեմբերի 30-ին ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ) պատվիրակությունը՝ տնօրեն Ռուբեն Թոփչյանի գլխավորությամբ, այցելել է Արցախի պետական համալսարան, որտեղ մեկնարկել է բուհերի ծրագրային հավատարմագրման նախապատրաստական եռօրյա աշխատաժողով:***

Աշխատաժողովին մասնակցում էին ԱՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Հասմիկ Մինասյանը, Արցախի Հանրապետության բուհերի ներկայացուցիչներ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ՈԱԱԿ պատվիրակությանն ու բուհերի ներկայացուցիչներին, շնորհակալություն է հայտնել Ռուբեն Թոփչյանին՝ ԱրՊՀ այցելելու, ծրագրային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար:

Աշխատաժողովին Ռուբեն Թոփչյանը ներկայացրել է ծրագրային հավատարմագրման չափանիշները, հնարավորությունը, քննարկվել են մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման մոտեցումները, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանն ուղղված հարցեր:

Աշխատաժողովները շարունակվել են նաև դեկտեմբերի 1-ին և 2-ին՝ «Մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներե թեմայով», և իրականացվել է մասնագիտական մանկավարժություն կրթական ծրագրերի մշտադիտարկում ԱրՊՀ-ում:

# ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ



***Նոյեմբերի 15-ին ԱրՊՀ-ում տեղի է ունեցել պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի անվան գիտական քննարկումների կաբինետի հանդիսավոր բացումը, որին ներկա էին Արցախի Հանրապետության պետական նախարար Ռուբեն Վարդանյանը, Արցախի Հանրապետության երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը, ԱրՊՀ խորհրդի նախագահ Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, պաշտոնատար անձինք, ուսանողներ:***

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը բարձր է գնահատել Գրիգորի Գաբրիելյանցի ավանդը Արցախի զարգացման գործում: Երկրաբան, բարեգործ, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ բնական ԳԱ անդամ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ԱրՊՀ պատվավոր դոկտոր Գրիգորի Գաբրիելյանցի իրականացրած ծրագրերը բազմաթիվ են:

ԱՀ պետնախարար Ռուբեն Վարդանյանը, համալսարանի համար կարևորելով քննարկումների կաբինետ ունենալը, շնորհավորել է բոլորին և շնորհակալություն հայտնել Գ.Գաբրիելյանցին. «Մեր իրականությունում քննարկումների մշակույթը վերականգնելու անհրաժեշտություն կա: Ուզում եմ շնորհակալություն հայտնել նման մեկնարկի համար, Ձեր շնորհիվ ստեղծվել է մի հարթակ, որը կնպաստի քննարկումների մշակույթի զարգացմանը»,-նշել է Ռուբեն Վարդանյանը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



*Նոյեմբերի 7-ին տեղի ունեցավ ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա գործունեության մասին հաշվետվություն: Հաշվետվությանը ներկա էին ռեկտորը, պրոռեկտորներ, խորհրդի անդամներ:*

Ֆակուլտետի դեկանը ներկայացրել է հաշվետու տարում ուսումնական գործընթացի, գիտահետազոտական, կազմակերպչական, ուսանողների հետ տարվող բարոյահոգեբանական աշխատանքների ուղղությամբ իրականացված աշխատանքները: 2021-2022 ուսումնական տարում ֆակուլտետում ուսումնագիտական գործունեությունն իրականացվել է երկու ամբիոններում՝ «Տնտեսագիտության տեսության և կառավարման» և «Ֆինանսահաշվային»: Ֆակուլտետն առկա և հեռակա ուսուցման համակարգերում ունի ընդհանուր 301 ուսանող:

Ռ. Մանգասարյանի խոսքով՝ ֆակուլտետն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների շուրջ՝ կազմակերպելով գիտական բանավեճեր, կլոր սեղաններ, գիտական ընթերցումներ, ներկայացնելով գիտական հոդվածներ, տարաբնույթ միջոցառումներ:

«Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ: Իրականացվել են արդյունավետ և թափանցիկ վերահսկողական աշխատանքներ, և ամրապնդվել է կարգապահությունը: Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրների շուրջ ֆակուլտետը ծավալել է գիտահետազոտական աշխատանքներ»,-հաշվետու տարվա ձեռքբերումների մասին նշել է դեկանը: Առկա խնդիրների մասին խոսելով՝ դեկան Ռ. Մանգասարյանը դրանց լուծման համար անհրաժեշտ է համարում դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների շարունակական բարելավումը, մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, հոդվածների տպագրության աճը, էլեկտրոնային դասախոսությունների ժողովածուների պատրաստումը, հանրապետությունից դուրս վերապատրաստման դասընթացների մասնակցելը, կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման ապահովումը, արտաքին համագործակցության շրջանակում կապերի ակտիվացումը:

Հաշվետվության շուրջ ելույթներ են ունեցել պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ամբիոնների վարիչները, դասախոսներ և ուսանողներ՝ բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ ընդգծելով, որ ֆակուլտետը, հաշվետու տարում կատարել է իր առջև դրված խնդիրները:

Ռեկտորը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը՝ կատարված աշխատանքի համար և կարևորել միջազգային պարբերականներում գիտական հոդվածներով հանդես գալու անհրաժեշտությունը, ուսանողների շրջանում գիտական ուղղվածությամբ միջոցառումների ակտիվացումը: Հաշվետվությունը գնահատվել է բավարար:



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



***Նոյեմբերի 4-ին տեղի ունեցավ ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան Լուսինե Մարգարյանը հանդես եկավ 2021-2022 ուստարվա ընթացքում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ:***

Հաշվետվության ընթացքում նա ըստ ուղղությունների անդրադարձավ ֆակուլտետի կառուցվածքին և նրա կառավարման համակարգին, կրթական գործունեության կազմակերպմանը, ուսումնամեթոդական գործունեությանը, ուսանողների և դասախոսների գիտական աշխատանքին, համագործակցությանը: 2021-2022 ուստարում ֆակուլտետում ուսումնագիտական գործունեությունն իրականացվել է 4 ամբիոններում՝ Ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի, ռոմանագերմանական լեզուների, գրականության և լրագրության, ռուսաց լեզվի և գրականության: Նոր ուստարվա մեկնարկին ֆակուլտետն ուներ 468 ուսանող, որից 350՝ առկա ուսուցման համակարգում, ընդ որում մագիստրատուրայի՝ 51, իսկ 67-ը՝ հեռակա: Ուսումնամեթոդական գործունեությունը բնութագրելով՝ Լ.Մարգարյանը նշել է, որ հաշվետու տարին անընդհատ էր ուսումնական գործընթացի կազմակերպման համար. ուսումնական գործընթացի համակարգայնությունը որոշակիորեն վերականգնվել է: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 36 հոդված, հրատարակել 8 ուսումնասիրություն և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի խորհուրդը հրավիրել է 8 նիստ՝ օրակարգային 34 հարցերով: Ամփոփելով 2021-2022 ուսումնական տարվա կատարածը՝ դեկանը որպես խնդիր առանձնացրել է *Անգլերեն լեզու և գրականություն, Թարգմանչական գործ* կրթական ծրագրերի ուսանողների՝ օտարազգի ներկայացուցիչների հետ հանդիպման, կենդանի շփման հնարավորություն չունենալը: Ըստ նրա՝ թույլ կողմերից է շարունակում մնալ *Լրագրություն* կրթական ծրագրի գծով հիմնական աշխատակազմ ունենալու հարցը:

«Եթե անցյալ տարի նշել էինք, որ մեր խնդիրն էր իրականացնել «միջազգայնացում տանը», առցանց հնարավորությունները օգտագործելով՝ հնարավոր բոլոր միջոցներով ներգրավվել Արցախից դուրս առկա իրականությանը ինտեգրվելու, ապա հաշվետու տարվա արդյունքներից արդեն երևում է, որ առկա է այդ ռեսուրսներից օգտվելու ունակ պրոֆեսորադասախոսական համակազմ: Դասախոսական համակազմի առցանց հանդիպումների, վերապատրաստման դասընթացների մասնակցության ակտիվությունը վկայում է, որ մեկնարկված է միջազգայնացում տանը գործընթացը»,-որպես ձեռքբերում առանձնացրել է դեկանը և հավելել, որ ուժեղ կողմերից են նաև հետևողականորեն իրականացվող ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Հաշվետվությունը գնահատվել է բավարար: Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել բանասիրական ֆակուլտետի դեկան Լ.Մարգարյանին՝ բարձր գնահատելով կատարված աշխատանքը: